



ԱՄՍԱՐԵՐՔ
AVEDARANI TSAIN

An Armenian Religious Monthly

Propr. Rev. K. T. SARIAN

Արամուհան՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ
Խմբագիրներ՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ և Կ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՄԱՐՏ 1939

ԹԻԻ 3

Սուրբ Երեմիայի մը մեծ ձայնով կ'ըսէր. Աստուծո՛վ
վախեցէ՛ք ու փառք տաէ՛ք Անոր, վասնզի Անոր դա-
տաւորանի ժամը եկաւ: Յայտ. 14:7



ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ

ԿԱՐԵՒՈՐ ԿԷՅԵՐ ԹՇՐԹՆԱ ՆՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

1. Մեր նշանաբանը.— Էական կեսերու մէջ միութիւն, ոչ էական կեսերու մէջ ազատութիւն, իսկ ամէն բանի մէջ սէր:— *Օգոստինոս*:

2. Նպատակը.— Ծառայել Քրիստոսի սրբազան դասին: Պայքարիլ մոլորութեանց դէմ: Տարածել Աւետարանի նշանները, Քրիստոսի ձրի փրկութիւնը քաղաքացիներէն: Տեսնել ապաշխարութեան եւ վերստին ծնունդի անհրաժեշտութիւնը՝ Աստուծոյ Թագաւորութիւնը մտնելու: Մղել փրկուածները սրբազործուած կեանքի եւ այսպէս պատրաստել զանոնք Քրիստոսի փառաւոր վերադարձին:

3. Դաւանանքը.— Կը հաւատայ (1) Սբ. Դրոց Աստուծէ ներքեցեայ, անսխալական եւ հաւատարմ կեանքի կանոնը ըլլալուն: (2) Ամենասուրբ Նրբագործութեան: (3) Քրիստոսի Աստուածութեան: (4) Սբ. Հոգւոյն անձնաւորութեան: (5) Վերստին ծնունդի: (6) Սրբազործութեան եւ Սբ. Հոգիով մկրտուած կեանքի: (7) Մեր Տէրոջ Կրկին, անձամբ վերադարձին: (8) Մեղեցիներու յարութեան: (9) Ընդհանուր դատասանի: (10) Սրբոց՝ Քրիստոսի հետ քաղաւորութեան: (11) Նրկինքի եւ դժոխքի: (12) Ստանալին անձնաւորութեան, բարի եւ չար հրեշտակներու գոյութեան: (13) Արդարներուն համար յաւիտեական կեանքի, իսկ մեղաւորներուն համար՝ յաւիտեական տանջանքի: (14) Եկեղեցւոյ միասնականութեան եւ անոր վերջնական յաղթանակին:

4. Կը հրատարակուի իբր ոչ-յարանուանական անկախ կրօնական ամսաթերթ, հայերէն եւ հայաստա քրեհէն լեզուներով:

5. Աշխարհիկ ծանուցումներ չեն ընդունուիր:

6. Ժողովածներ կ'ընդունուին անոնցմէ, որոնք հոգեւոր կեանքի անձնական փորձառութիւնը եւ դուրսէն եղողներէն ալ բարի վկայութիւն ունին, կը յարգեն քերթին ուղղութիւնը եւ ղրկուած յօդուածները կը ծառայեն հետապնդուած նպատակին:

7. Թերթիս սինակները տրամադրելի չեն վիճաբանական նիւթերու համար եթէ անոնք պարզապէս վեհեր յարուցանելու կը ծառայեն եւ ոչ թէ լուսաբանութիւններու:

8. Չհրատարակուած յօդուածներ չեն վերադարձուիր:

9. Վեց ամիսէն նուազ պայմանաժամով բաժանորդագրութիւնը չընդունուիր:

10. Եղած հարցումներուն պատասխանելու կամ չպատասխանելու իրաւունքը կը վերապահուի այդ սինակը վարողին:

ԽՄԲԱԳԻՐՆԵՐ

Ուշադրութիւն.— Բոլոր դրամական առաւումներ, յօդուածներ եւ բղբակցութիւնք պէտք է հասցեագրուին հետեւեալ կերպով:—

K. T. SARIAN
2, Rue Ahmed Pacha Hasanen,
Shoubra, Cairo (Egypt):



ԱՄՍԱՐԵՐ
AVEDARANI TSAIN

An Armenian Religious Monthly

Propr. Rev. K. T. SARIAN

Արտոնատէր՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ
Խմբագիրներ՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ և Կ. ԹՈՒՄԱՆԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՄԱՐՏ 1939

ԹԻԻ 3

Եւ երեշտակ մը մեծ ձայնով կ'ըսէր. Աստուծմէ
վախցէ՛ք ու փառք տուէ՛ք Աճոր, վասնզի Աճոր դա-
տաստանի ժամը եկաւ:
Յայտ. 14:7

Կրօնական հաշածանք (Փուլսայի վաւերաթուղթին առթիւ)

Բռները չեն սիրեր ցորեկը, ցա-
ւող աչքեր՝ լոյսը: Երբ լոյսը յայտ-
նուի խաւարը սիրողներ կը կծկուին
իրենց մութ խռոչներուն մէջ, կար-
ծես բողբոջու չամար ծագող Արեգա-
կին դէմ:

Լոյս և խաւար, կեանք և մահ
բացարձակապէս անկարող են հաշ-
տուիլ և համաձայնիլ իրարու հետ, և
հետեւաբար տհեղ պայքար մը գոյու-
թիւն ունի միշտ իրարու միջեւ:

Անոնք զերթ երկու տիտաններ կը
մտրանչին ահաւոր գիրկընդխառնու-
մով զիրար պարտութեան մատնելու
նպատակով: Այսպէս աշխարհ երկու
հսկայ բանակներու է բաժնուած: Սա-
կայն խաւար ուժը յուսահատ պայքար
մըն է՝ որ կը մղէ լոյսին դէմ: Արդա-
րեւ, հազարամեաներ խաւարը տիրող
ուժ մը եղաւ աշխարհի վրայ: Բայց
երբ Արեւելքէն արդարութեան փա-
ռայեղ Արեգակը ծագեց, դարերու

կուտակած թանձր մթութիւնը տեղի
տուաւ Լոյսի այդ հեղեղին առջեւ:
Քրիստոսի լուսաշող Աւետարանը իր
ճաճանչները զրկեց աշխարհի չորս
ծագերը. մանաւանդ Արեւմտքի եր-
բեմնի բարբարոս ցեղերուն մէջ մուտք
գործեցին անոնք: Ընդմտութիւնը կը
յողթանակէր սուտին և կեղծիքին
վրայ, և կեանքը՝ մահուան վրայ:

Բէեղզերուղ հաւաքեց իր բոլոր
ուժերը աղջամուղջի, ատելութեամբ հո-
գիով ահաւոր հարածանք մը յարոյց
լոյսի պաշտօնեաներուն դէմ: Այն ա-
տեն սադոյէլական գրոհի բանակնե-
րուն գլուխը կը կենային Ներոնի,
Կալիգուլայի, Դոմիտիանոսի և Դիոկ-
ղետիանոսի պէս ճիւղաներ: Ետքէն
կուգար հաւատուրացութեան թանձր
մշուշը՝ պակասը լրացնելու որպէսզի
դարեր մամողջ աշխարհը մնար մթու-
թեան մէջ, խաւար դարեր յորջոր-
ջուելու համար պատմութեան մէջ:

Թշնամին պահ մը յողթական երեւցաւ Բարեկարգութիւնը երեւոյն հանեց լոյսը և կրկին Աւետարանին անթելուած կրակը արծարծեց: Դժոխքի ուժերը կրկին ընկրկում մը ունեցան, առանց սակայն զինութափ ըլլալու:

Այս օրերս չարը փոխած է իր տարազը և գործելակերպը: Անիկա դուրս կուգայ իր թաքստոցէն, համայնավարութեան կարմիր, նացիականութեան՝ գորշ և ֆաշական սեւ շապիկ հագած, բէթիմներու ետեւը պահուած իր գեհնային մտադրութիւնը ի գործ դնելու: Տեղ մը անաստուածներու ընկերութիւն մը կը կազմէ և կ'աշխատի միջին դարերու խաւարը ետ բերել աշխարհի վրայ: Սակայն տարիներէ ի վեր ի հեճուկս այս անաստուածներու անդուլ ջանքերուն՝ Քրիստոսը և իր փրկարար խօսքը արմատախիլ ընելու մարդոց սրտերուն մէջէն, անոնք աւելի խորունկ տեղ ունին մարդոց սրտերուն մէջ քան երբեք, մանաւանդ երիտասարդ դասակարգին մէջ: Եւ անաստուածներ ի տես այս ճշմարտութեան՝ յուսալքութեամբ մատնուած են պարզապէս:

Անդին ցեղապաշտութիւնը պիտի կրնայ ընաջինջ ընել ժողովուրդներու և անհատներու մէջէն քրիստոնէական զգացումները: Գաղտնի աղբիւրներէն մեզի եկած լուրերու համաձայն սոյն հարցումին ու պատասխանը ժխտական է: Քրիստոսի սիրոյն համար կեդրոնացման կայաններու մէջ՝ իրենց զբաղւած ունենալով հովիւ նիւթիւրը, կը հիւժին, և զաւակներու տէր մայրեր իրենց կեանքերը կը զոհեն պահելու համար իրենց հաւատքը առ Քրիստոս մինչ ի մահ: Իսկ միւս կողմէ պապական եկեղեցւոյ գերման կարտիստներ, արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ ստորագրած են Ֆուլտա

քաղաքին մէջ վաւերութեամբ մը՝ որ պատմական մեծ նշանակութիւն մը ունի: Ստորեւ թարգմանաբար կուտանք մէկ ամփոփումը անոր, ցոյց տալու համար՝ թէ մինչեւ իսկ պապական եկեղեցւոյ բարձրաստիճան պաշտօնատարներ կը ծառանան Գերմանիոյ և նախկին Աւստրիոյ մէջ քրիստոնէութեան դէմ շղթայազերծուած հալածանքին դէմ: Վաւերութեամբ կ'ըսէ.

«Որոշ է՝ որ ամէն կողմ այսօր հետապնդուած նպատակը և յարաճուն ճնշումը, քրիստոնէական կրօնքին բռնաջնջումն է... Քրիստոնէութիւնը կ'որակուի որպէս մարած և խռած մնացորդը նախապաշարման դարերու, և որդի ժամանակներու համար բոլորովին անգործ, անարժէք և ժամանակավրէպ»:

«Ցեղապաշտական վարդապետութիւնը կ'աշխատի մեզի հաւատացնելու թէ՝ Քրիստոսի անձն ու կեանքը գերման ցեղին զարգացման ներհակ է: Արդեօք կիրքը նացի ղեկավարներուն աչքերը կուրցուցե՞ր է այն իրողութեան թէ՝ քրիստոնէութեան դէմ իրենց պայքարը ուղղին մէջ խոշոր ճեղք մը բացած է:

«Անոնք կրօնքին դէմ պատերազմ կը հրահրեն զայն ընաջինջ ընելու, անոնք արդեօք այնքան տխուր և կոյր են՝ որ կը խոստանան ժողովուրդին քրիստոնէական լոյսը գերման ժողովուրդին մէջ՝ բիրտ ուժով անմիջապէս և կատարելապէս մարել»:

«Արդարեւ անոնք կը խօսին «Աստուծոյ հանդէպ հաւատք»ի մասին, և սակայն երբ քննութեան առնուի, տնիկա այնքան անհաշտ է գերմանացիներուն Աստուծոյն հետ, որքան կրակը ջուրին հետ: Անոնք քրիստոնէական Աստուածը մէկդի կ'ընեն և անոր տեղ «Գերման Աստուած» մը կը դնեն: «Գերման Աստուած» Արդեօք անիկա

միւս ազգերուն Աստուծոյն տարբեր է: Եթէ այդպէս է, ուրեմն որքան ցեղ կայ աշխարհի վրայ նոյնքան աստուածներ կան. այսպիսի աստուած մը ոչինչ կ'արժէ և մեր սիրտերը չի գոհացնիր:

«Մի անգամ ընդմիջտ պէտք է հասկցուի՝ որ մենք եկեղեցական պաշտօնեաներս, ի գին ամէն հալածանքի և զրկումներու, մինչև իսկ մեր կեանքերուն, պիտի չհրաժարինք մեր կրօնական համոզում և իրաւունքներէն: Մենք պետութեան և ազգին դէմ պայքարող չենք: Աստուծոյ խօսքը կը պատուիրէ հնազանդիլ իշխանութեանց երբ օրինաւոր են անոնց պահանջները, սակայն առաքելաւ նաեւ կը պատուիրէ մեզի մարդոցմէ աւելի Աստուծոյ հնազանդիլ»:

Արդ, որոշ է՝ որ ամբողջատիրական երկիրներու մէջ հալածանքը ուղղակի քրիստոնէութեան դէմ է, խաւար ուժերուն պայքարն է լոյսին դէմ, այո՛, ան ուղղուած է Գրիստոսի և իր հաւատարիմներուն դէմ: Պատմութիւն-

նը միշտ կը կրկնուի: Այսօր ճշմարիտ քրիստոնեաներուն համար կարեւորը պատրաստուիլն է ամբողջիմագրաւ լուսնաց խօսքը ամուր բռնելով: Այսօր այս հալածանքը աշխարհի տյսինչ մասին մէջն է, վաղը մեզի ալ կրնայ հասնիլ: Մեր տեղը որոշ է, սակայն անիկա նաեւ պէտք է յայտնի ըլլայ թէ մինչև վերջը հոն պիտի կենանք, ցոյց տալու համար թէ քրիստոնէութիւնը մարած և խռոված մնացորդը չէ նախապաշարման դարերու: Ան մօտ երկու հազար տարիներէ ի վեր իր լուսաւոր ճամբան կը շարունակէ անսայթաք և յաղթական: Շատ մը մուրճեր հինցած են քրիստոնէութեան պողպատեայ սուլին վրայ: Ամբողջատիրական ուժերն ալ պիտի բախին հոն միայն փշրուելու համար: Մեր Տէրը ըսաւ, «Քաջալերուեցէք ես աշխարհի յաղթեցի»: Այս ազադակը, լոյսին՝ խաւարին դէմ տարած վերջին յաղթանակին ազադակն է, ալելուիա:

Խ. Թ. Ս.

ԱՐՔՈՒՆԻ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ, ՄԻՆՉԵՒ ՈՐ ՄԵԾ ԱՐՔԱՆ ԵՐԵՒՆԱՅ

«Անոր ծառայութիւն կ'ընէին»: (Լուկ. 8:3)

Արդարեւ աշխարհի վրայ մարդու մը համար մեծագոյն պատիւը պիտի ըլլար արքունի ծառայութեան մէջ գտնուիլ: Սովայն յաւիտենական թաղաւորի մը ծառայութեան մէջ ըլլալ անբողբոսելիօրէն աւելի մեծ պատիւ մըն է քան առաջինը:

Դիտենք պահ մը այս երկնային թագաւորին անձը, որուն կը ծառայեն ճշմարիտ հաւատացեալներ: Ան որ ի յաւիտենից գոյութիւն ունի, «Որ աներեւոյթ Աստուծոյ պատկերն է...

վասնզի անով ամէն բան ստեղծուեցաւ, ինչ որ երկինքը ու ինչ որ երկրի վրայ, անոնք որ կ'երեւնան և անոնք որ չեն երեւնար, թէ՛ աթոռները, թէ՛ տէրութիւնները, թէ՛ պետութիւնները, թէ՛ իշխանութիւնները, բոլոր բաները անով և անոր համար ստեղծուեցան» (Կող. 1:15-17): Ան որ կոչուած է նաեւ, «Սքանչելի, Խորհրդակից, հզօր Աստուած, յաւիտենականութեան հայր, Սաղաղութեան Իշխան» (Ես. 9:6): Վերջապէս Ան՝ որ

մարդացու և իբրեւ երախայ Բեթղէ-
հէմի մէջ ծնաւ, և որպէս գառն Աս-
տուծոյ պատարագ մատոյց իր անձը
աշխարհի մեղքին համար, և համբառ-
նալով Աստուծոյ մեծութեան աջ կող-
մը նստաւ: «Ամէն իշխանութիւն ինձի
տրուեցաւ երկինքի ու երկրի մէջ»
(Մատ. 28:18): «Ու եօթներորդ հրեշ-
տակը փոզը հնչեցուց, ու երկինքի
մէջ մեծ ձայներ եղան որ կ'ըսէին,
«Աշխարհի թագաւորութիւնները մեր
Տէրոջ ու իր Օծեալին եղաւ, և ինք
պիտի թագաւորէ յաւիտեանս յաւիտե-
անից» (Յայտ. 11:15):

Ահա այսպիսի թագաւոր մըն է՝
որ կանչեր է մեզ իր ծառայութեան
մէջ ըլլալով՝ կերպ կերպ պաշտօնե-
րով: Որովհետեւ մեզմէ իւրաքանչիւրը
ունի իր ուրոյն պաշտօնը և ձիրքը,
ինչպէս որ մէկ մարմնի մէջ կան շատ
անդամներ, սակայն չունին միեւնոյն
պաշտօնը: Նոյնպէս ալ մենք Քրիստո-
սով մէկ մարմին ենք, սակայն զանա-
զան պարգեւներով օժտուած (Հռ.
12:4-6 եփես. 3:7-8): Ասիկա կը հաս-
տատէ մեր Տէրը երբ կ'ըսէ, «Ինչպէս
օտար երկիր գացող մարդ մը կանչեց
իր ծառաները և իր ունեցածը անոնց
յանձնեց, մէկուն տուաւ հինգ տա-
ղանդ, մէկուն՝ երկուք և մէկուն՝
մէկ, ու անմիջապէս ճամբայ ելաւ...
եւս ժամանակէ ետեւ այն ծառաներուն
Տէրը եկաւ եւ անոնցմէ հաժիւ ուզեց»
(Մատ. 25:14-19): Ուրեմն մեր ունե-
ցած հինգ, երկուք և մէկ տաղանդ-
ները հաւատարմութեամբ գործածենք
գիտնալով՝ որ օր մը հաշիւ պիտի
տանք այն մեծ Համարառութին առ-
ջեւ:

Արդ ծառայեմք մեր մեծ Արեւոյին.—

1. Մեր վկայութիւնով.— «Ինձի
համար վկաներ պիտի ըլլաք» ըսաւ
Յիսուս: Տէրոջ իւրաքանչիւր զաւակը

պարտի վկայել ամենայն համարձա-
կութեամբ իր գտած Փրկիչն ու յա-
ւիտենական կեանքը, և տսիկա պէտք
է ընէ Սուրբ Հոգւոյն զօրութեամբը
(Գործ. 1:8, 3:15):

2. Թերթիկներու միջոցաւ.— Ինչ
օրինեալ գործ է ան, քանի հազարա-
ւոր ու բիւրաւոր հոգիներ փրկութիւն
գտած և օրհնուած են թերթիկներու
ընթերցումով: Եղած ենք տկանատես
շատերուն օրհնուելուն, սակայն անոր
ճշմարիտ արդիւնքը արձանագրուած
է միայն երկնային տոմարին մէջ:
Ճօրճ Միւլլըր կ'ըսէ, «Թերթիկները եր-
բեք չեն սովորար, անոնք ամէն տեղ
կը մտնեն, և ամէն դասու պատկանող
մարդոց — հարուստ, աղքատ, անուս
կամ ուսեալ — մատնանիչ կ'ընեն եր-
կինքի ճամբան: Մէկը կրնայ գրել,
իսկ անոնք որ չեն կրնար՝ կրնան
ցրուել և այդու մեծ ծառայութիւն
մատուցանել, և վարձատրութեան
մասնակից ըլլալ»:

3. Նամակագրութիւնով.— Ստէպ
անգիտացած ենք նամակագրութեան
մատուցած ծառայութիւնը, կամ այդ
մասին շատ անփոյթ եղած ենք: Ասի-
կա ուրիշ ազդու ծառայութիւն մըն
է Տէրոջ այգիին մէջ: Հեռու կամ մօտ
եղողները տեղեակ պահել մեր սրտի
խաղաղութեան, Տէրոջմով մեր գտած
երջանկութեան: Յետոյ պէտք է գրել
մխիթարելու և քաջալերելու անոնք
որոնք պէտք ունին այդ մխիթարու-
թեան համար իրենց վշտերուն և ցա-
ւերուն մէջ:

4. Գիրքերով.— Աստուծոյ զաւակ-
ները ո՛րքոն օրհնուած են նաեւ օգ-
տակար գիրքերու կամ դրքոյկներու
ընթերցումով: Շատեր մխիթարուած,
լուսաւորուած և ուրիշ շատեր արթն-
ցած և սրբութեան կեանքի առաջնոր-
դուած են: Հաւատացեալները պէտք է
մղուին աւելի գրասէր ըլլալու քան

ինչ որ են:

5. Թերթերով. — Թերթիս սեղմ էջերը թոյլատու չեն պատմելու համար՝ թէ թերթերը ինչ մեծ լոյս, յոյս, հոգեւոր միութարութիւն և անունդ ու վայելք պատճառած են Աստուծոյ ընտրեալ սուրբերուն: Այս առթիւ մի քանի թելադրութիւններ: —

1. Միշտ աղօթէ անոնց պատասխանատու և վարիչ անձերուն համար:

2. Երբ թերթը կ'ստանաս աղօթքով և հանդարտ մտքով կարգա՝ գայն:

3. Վ ա յ ե լ ա ծ օրհնութիւններդ պատմէ ուրիշներուն ալ:

4. Բաժանորդագրուէ եթէ չես ըրած տակաւին և ուրիշներն ալ մզէ միեւնոյնը ընելու:

5. Մի' մոռնար նուէրներովդ սատարել այս գործին, որ է անուշահոտ պատարագ Տէրոջը առջեւ:

6. Դրէ՛ եթէ Տէրը բան մը կուտայ քեզի:

6. Նիւթականով. — Սբ. Դիրքը յատկապէս կը չեչտէ որ հաւատացեալները ըլլան առատաձեռն Տէրոջը գործին համար, և ջանան դիզել գանձեր երկիրքի մէջ: Խնայենք կարգ մը բաներէն, որոնք անհրաժեշտ չեն և օգնենք Աստուծոյ դատին: Այս առթիւ մէկը կ'ըսէ. «Բաց պահէ ձեռքդ ու քսակդ Աստուծոյ գործին համար եթէ ոչ, այնպէս կը կապուին անոնք՝ որ միտին մահը կարող կ'ըլլայ քակել զանոնք»:

7. Կիւ. Դպրոցներով. — Երկար պէտք է գրել բացատրելու համար Կ. Դպրոցի մատուցած ծառայութիւնը մանուկներուն համար: Ապագայ եկեղեցին անոնցմէ պիտի բողկանայ նաև աշխարհի ծառայող մարդիկ: Ներկայիս Կ. Դ. աշակերտներու թիւը 40 միլիոն է: Սիրելիներ աշխատինք նաև այս օրհնեալ գործին մէջ մինչեւ որ

յայտնուի Մանուկներուն Բարեկամը:

8. Միսիօնարական գործով. — Աստուած մասնաւոր անհատներ ընտրած և զրկած է աշխարհիս հեռաւոր և խաւարած մասերը ո՛ւր կը տիրէ կռապաշտական գրութիւն մը, ինչպէս են օրինակ՝ Հնդկաստան, Ափրիկէի մեծ մասերը, Չինաստան եւն., ուր իրենց կեանքերը զոհելու գնով միսիօնարներ աշխատած են շատերը կռուքերէ ճշմարիտ Աստուծոյ, խաւարէն՝ լոյսի առաջնորդելու: Մենք եթէ չենք կրնար հեռաւոր երկիրներ տանիլ լոյսը, կրնանք այդ գործը կատարել մեր մօտիկ շուրջը:

9. Բեմական գործ. — Ասիկա փրկութեան պատգամը տալ է Բեմերէն: Տէրը ունի նաեւ իր աւետարանիչներն ու հովիւները սոյն գործին համար: Անոնք ամպիոնի վրայ կեցած կը պատգամեն, կը հնչեցնեն Աւետարանի ձայնը անոնց յիշել ստիպող փրկութիւնը մեղաւորներուն, իսկ Աստուծոյ մեծ բարկութիւնը չդարձողներուն: Օ՛ն, սիրելի գործակիցներ, հաւատարմօրէն աշխատինք այս պատասխանատու պաշտօնին կանչող Արքային և իր Աւետարանին՝ Սբ. Հոգւոյն օժանդակութեամբը:

10. Աղօթքով. — Աղօթքը մեծագոյն ոյժն է որով կարելի է ծառայել թագաւորին ծառայութեան մէջ: Կը պարտինք արթուն կենալ աղօթքի մէջ մեր անձնական կեանքի մաքուր և լեցուն մնալուն համար: Կը պարտինք անդադար աղօթել Աստուծոյ բոլոր սուրբերուն համար: զրպէսզի հաստատ մնան հաւատքի մէջ, նոյնպէս պէտք է աղօթել Աւետարանին պաշտօնեաներուն համար:

Տէրը ի պատասխան հոգիով և հաւատքով լեցուն զաւակներուն աղօթքին՝ բացած է երկնքի պատուհանները

Արթնութեան համար փափափ

Ժամը 12ին քաջուեցայ սենեակս, և հոգւոյս մէջ ունենալով ուրախութիւն և երախտագիտութիւն՝ անկողին մտայ:

Հետեւեալ առտու գացինք գլխու-
ւոր ժողովասրահը, 1200էն աւելի հո-
գիներ ներկայ էին, և դարձեալ խո-
րանին առջեւ լեցուեցաւ, փառք
Տիրոջը Զեռքերնին վեր բարձրացու-
ցած կ'երգէին. օրհնեալ ըլլայ անու-
նը:

«Ժամը 4ին կրկին քարոզեցի, այս
անգամ 1500է աւելի բազմութեան մը,
չատեր ստիպուած էին ոտքի վրայ
մնալ: Անգամ մը եւս մարդիկ խորա-
նին առջեւ շարուած էին: Ետքը ժամը
7ին երրորդ անգամ դիմաւորեցի
բազմութիւնը, և Հոգւոյն Սրբոյ զօ-
րութիւնը յոյժ իրական էր: Ունկըն-
դիրներու ստուար բազմութեան վրայ
սուրբ լուութիւն մը կը տիրէր, ժողո-
վին վերջաւորութեանը զէպի առաջ

Թափելու համար իր Սուրբ Հոգին
հեղեղի նման: Մենք ալ պէտք ունինք
այդ հեղումին, ընդհանուր թնութեան
համար որպէսզի հազարաւորներ մուտք
գործեն փրկութեան զոհէն ներս: Ան
պատրաստ է եթէ մենք վճարենք
գինը: Արդ մօտենանք շնորհաց աթո-
ռին՝ լեցուն հաւատքով ու մաքուր
սրտով ու ինքրենք մեր Հօրմէն որ
կրկին քանայ փակ պատուհանները ու
զրկէ վերջին օրհնաբեր անձրեւները,
իւր մեծ անուան փառքին համար:
Վերջապէս սուրբ, յաղթական և խո-
նարհ կեանքով ծառայենք մեր Արքա-
յին՝ որ է օրուան մեծ պէտքը:

«Ահա շուտով կուգամ, ու իմ
վարձքս ինձի հետ է, ամէն մէկուն իր
գործին համեմատ հատուցանելու»
(Յայտ. 22:12), Կ. Յ. ԹՈՒՄԱՆԱՆ

եկողներուն թիւը այնքան շատ էր՝ որ
մենք շարունակեցինք ժողովը ժամ մը
եւս: Ասիկա վարի սրահին մէջն էր:
Ժամը Ծին վերի սրահը ելայ, ուր տե-
սայ որ 1300 հոգիէ բաղկացած բազ-
մութիւն մը ինձի կ'սպասէր: Ես
դարձեալ հռչակեցի պատգամը և հրա-
ւէր տուի. ահա անմիջապէս երկար
շարք մը այր մարդոց, կանանց, երի-
տասարդաց, ծերերու կը կենային խորա-
նին առջեւ և կոտրած հոգիով և ուրա-
խութեամբ՝ կ'ընդունէին Քրիստոսը:
Ասիկա իմ չորրորդ ժողովս էր այն
օրը և կը խորհէի թէ նաեւ վերջինը,
սակայն երբ Միշնի տունը դարձայ սեն-
եակը գտայ լեցուած ռուսերով, ամէ-
նը իրենց երեսին վրայ ինկած Աս-
տուծոյ առջեւ կ'աղօթէին, հանդար-
տութեամբ և եռանդով մը՝ որ միայն
ռուսերը այդպէս կրնան աղօթել: Ժա-
մանակ մը միացայ իրենց և յետոյ
թողելով գիրենք 12ին դարձայ քնա-
նայու: Ինչպիսի օր մը եղած էր ան,
ինչպիսի ժողովներ, ինչ հրաշալի
դարձեր, ինչ ուրախութիւն, ինչ զօ-
րութիւն, Կեանքիս մէջ՝ ո՛չ Գոհատա,
ո՛չ ալ Միացեալ Նահանգաց մէջ՝ այս-
պիսի ժողովուրդներու չեմ քարոզած:

«Զատկի կիրակին բնաւ չմոռցը-
ւելիք օր մըն էր: Առաջին ժողովը ա-
ռաւօտեան 6ին էր: Նախորդ գիշերը
ես գացեր էի Յոյն Օրթոտոքս եկե-
ղեցին՝ կէս գիշերին, տեսած էի մար-
դիկը մոմեր բռնած, դիտեր էի քա-
հանները իրենց շքեղ զգեստաւորու-
մով երբ անոնք կը քայլէին եկեղեցի-
ին շուրջը երեք անգամ դառնալով,
մտիկ ըրեր էի երգչախումբին հրա-
շալի երգերուն, լսեր էի արքեպիս-
կոպոսին քարոզը յարութեան վրայ:
Ժամը 2 էր երբ պառկեցայ. հետեւա-
րար առտուն 6ին քարոզել գիրին
չէր: Առտուն 1200 հոգի ներկայ էր,
չատեր պատասխանեցին հրաւերին և
ընդունեցին Քրիստոսը» (Շար.)

ՍԲ. ԳԻՐՔ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ(*)

Անգամ մը ուսանողին մէկը ձ. Պրայնին կ'ըսէ. «Ուրախ եմ որ ձեզի պէս մէկը յանձն առած է Սբ. Գրքին պաշտպանութիւնը»: «Ես չեմ պաշտպաներ Սբ. Գրքը» կը պատասխանէ ձ. Պրայն: «Հապա ի՞նչ է ձեր ըրածը» հարցումին, «Ի՞նչ է առիւծ մը պաշտպանելու լաւագոյն կերպը» կը պատասխանէ ուրիշ հարցումով մը: «Արդարեւ չեմ գիտեր» կ'ըսէ երիտասարդ ուսանողը: «Առիւծ մը պաշտպանելու լաւագոյն կերպը, կ'ըսէ ձ. Պրայն, պարզապէս զանիկա ազատ արձակել է, ահա այդ է իմ ըրածս ալ, որովհետեւ սուր մը չպաշտպանուիր, այլ կը գործածուի, և Սբ. Գրքը՝ Հոգիին սուրն է»:

Իմ բրոֆ. իս ինծի սորվեցուցածը սա էր՝ թէ Ս. Գրքը առասպելներու և ժողովրդային հէքեաթներու հաւաքածոյ մըն է: Այսպէս կը հաւատան այսօր շատեր ալ: Սակայն Պետրոս առաքեալ 2 հազար տարիներ առաջ գիտնալով թէ ետքէն այդպէս ըսողներ պիտի ելլեն, Սբ. Հոգիով առաջնորդուած գրեց, «Մենք վարպետութեամբ շինուած առասպելներու ետեւէ չենք երթար, և այդպէս չի ցուցուցինք ձեզի մեր Տէր Յիսուս Քրիստոսի զօրութիւնը և գալուստը, հապա... ահա-

նաեւս ըլլալով տնոր մեծափառութեանը . . . (Բ. Պետ. 1:16-19):

Ես աւելի կը նախընտրեմ հաւատալ սկանաւոր առաքեալին վկայութեան քան թէ տասը հազար ուրիշներուն, որոնք առանց տեսնելու կը խօսին 1900 տարիներ ետքը:

Յետոյ գիտէք՝ որ սկանաւոր վկայի չափ կարեւոր է նաեւ սկանջալուր վկան: Առաքեալներէն երեքը լսեցին ոստուածային վկայութիւնը պայծառակերպումի լեռան վրայ, «Աստիկոս է իմ սիրելի Որդիս, ատոր մտիկ ըրէք»: Աստուած կ'ընա՞ խօսիլ կը հարցնեն: Տարօրինակ չէ՞ այս հարցումը: Անշուշտ անհեթեթ բան է խորհիլ թէ՛ Ան մարդուն խօսելու կարողութիւն կուտայ բայց ինք չկրնար խօսիլ:

Մարդիկ իրենց ուղեղին մէջ խօսքի կեդրոնը ունին, որմէ զուրկ են կապիկներ: Ահա թէ ինչու այս վերջինները չեն կրնար խօսիլ եթէ միլիոնաւոր տարիներ ալ անոնց խօսիլ սորվեցուի: Մինչդեռ մենք գիտենք որ մարդ իր սանդղուած մէկ օրէն խօսիլ սկսաւ Աստուծոյ հետ՝ Դրախտին մէջ: Այս տեսակէտին ալ մարդիկ կապիկներէն բարեշնչումի ճամբով չէին կրնար գալ:

Ըսինք թէ ահանջալուր վկան նոյնքան զօրաւոր է որքան սկանաւոր: Պետրոս կ'ըսէ. «Մենք լսեցինք»: Անգամ մը Իրլանտացի մը վկայութեան կը կանչուի: Խնդրոյ առարկայ վկայութիւնը հրացանի մը պայթումին վրայ էր: Դատաւորը կը հարցնէ. «Հրացանը տեսա՞ր»: Իրլանտացին կ'ըսէ. «Ոչ, հրացանը չտեսայ, սակայն լսեցի ձայնը»: Դատաւորը կ'ըսէ, «Հաստատ

(*) Մ. Խ. ձիւղ ցարի մը առաջ մեծ գիտնական եւ մանեհաբան ֆարոգիշ Տօֆ. Բիմմըր, սոյն նիւթին վրայ բանախօսութիւն մը քաւ ֆանի մը օրեր իրարու վրայ: Սոյն բանախօսութեանց ամփոփումն է որ հոս կուտանք իր Եանիկանութեան եւ օգտակարութեան համար:

վկայութեան համար տեսնել պէտք էր»։ Ասոր վրայ Իրլանտացիին խօսքը ուղղելով դատաւորին և երդուեալներուն կ'ըսէ. «Դուք բոլորդ ալ յիմարներ էք»։ Դատաւորը զայրացած կ'ըսէ. «Մեզ նախատեցիր. պէտք է հաշիւ տաս անոր համար»։ «Ես ձեզ չեմ նախատած» կ'ըսէ Իրլանտացիին։ «Անշուշտ, մենք ամենքս լսեցինք նախատալից խօսքդ» կը պնդէ դատաւորը։ «Պարտաքան է ադ, կ'ըսէ Իրլանտացիին, դուք զայն չի տեսաք, իսկ լսելով բան մը չի հաստատուիր»։ Սրամիտ Իրլանտացիին, որոշ է որ չիտակ կը տրամաբանէր։

Լսելը նոյնքան կարեւոր է որքան տեսնելը։ Առաքեալներ թէ՛ տեսան և թէ՛ լսեցին և անոնց վկայութիւնը միայն ընդունելի է։ Անկէց զատ առաքեալը կ'ըսէ. «Մենք ունինք նաև մարգարէական հաստատուն խօսք»։ Սբ. Գրոց մէջ հարիւր յիսուն մարգարէութիւնք տառացիօրէն կատարուած են։ Զաքարիա մարգարէն մանրամասնօրէն կը նկարագրէ Յիսուսի մատնուիլը, 30 կտոր արծաթի—ո՛չ աւելի ոչ պակաս— ծախուիլը և անով բրուտին արտին գնումը և ասիկա մօտաւորապէս 500 տարի առաջ։ Զաքարիա գիտէ՞ր այս բաները, ոչ։ Սակայն Տէրը գիտէր եւ Իր Սբ. Հոգիովը յայտնեց զանոնք։

Մովսէս 3000-3500 տարի առաջ գրեց թէ, «Կեանքը արիւնին մէջն է»։ Ասիկա իրողութիւն մըն է, զոր գիտնականներ չէին գիտեր մինչեւ ասկէ 150 տարի առաջ։ Այսօր գիտութիւնը գտած է՝ թէ կեանքը արիւնին մէջն է արդարեւ։ Արիւնը կը բաղկանայ երեք հարիւր միլիոն բջիջներէ, որոնք 24 ժամուան մէջ կը մեռնին ու կը վերածնին։

Մէկը ինծի հարցուց թէ՛ իբր գիտական մարդ, ի՛նչպէս կը հաւատամ վերածնունդի վարդապետութեան։ Պա-

տասխանեցի թէ երեք հարիւր միլիոն արեան բջիջներ՝ 24 ժամը անգամ մը կը վերածնին, և ասիկայ Աստուծոյ զօրութեամբը, այդ միեւնոյն զօրութեամբ ես գէթ մէկ անգամ և ընդամիշտ չեմ կրնար վերածնիլ։ Ինչ որ Աստուծոյ կարող է ընել արեան համար, միեւնոյնը ինծի համար կարող չէ՞ ընելու։ Սակայն Մովսէս ու՛սկից գիտէր այս գիտական ճշմարտութիւնը։ Անտարակոյս ինքը չէր գիտեր, սակայն, Տէրը գիտէր և իրեն այսպէս գրել տուաւ։ Ես վստահ եմ թէ՛ Սբ. Գիրքին և բնութեան հեղինակը Աստուծոյ ինքն է և անոնց միջեւ հակասութիւն չկայ։ Ասիկա ինծի ցուցուցած է տարիներու գիտական հետազօտութիւններս, որոնց յատկացուցած եմ պաշտօնէութեանս տարիներուն կէսը, իսկ մնացած կէսը Աւետարանի քարոզութեան։ (Շարունակելի)

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԵՄ ՄԻԼԻՈՆԱՏԵՐԸ

Մր. Բիէրթօն Մօրկըն, ամերիկացի մեծ միլիոնատէրը, որ 258 միլիոն տոլար զրամագլուխ ունեցող երկու նաւային մեծ ընկերութիւններու տէրը և նախագահն էր, մեռաւ 1913ին, իր 73րդ տարիքին մէջ։ 4 Յունուար 1913ին հետեւեալ հետաքրքրական և օրհնեալ վկայութիւնը ըրած է որ գրի առնուած է իր մահէն քիչ առաջ։

«Ես կը յանձնեմ հոգիս իմ Փրկչին, վստահ ըլլալով՝ թէ Նոյ զայն իր պատուական արիւնովը յուսցած է, և պիտի ներկայացնէ իմ Երկնաւոր Հօրս աթոռին առջեւ անարատ»։

Նաեւ, կը խրատէ իր զաւակները որ հաւատարիմ մնան Յիսուս Քրիստոսի քառութեանը հիման վրայ եղած կենդանի և փրկարար հաւատքին մէջ։

«Քանզի ուրիշ մեկով փրկուրիւն չկայ» Գործք 4:12։



ՄԵՐ ՀԱՅ ԵՐԿՍԵՐ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ



ՏԱՐՈՐԻՆԱԿ ՆՇԱՆԱՏԱԽՏԱԿՆԵՐԸ

Երկար տարիներ առաջ Ճաբոնի մէջ զարմանալի նշանատախտակներ կային՝ Փողոցին անուաները և թիւերը չէին կրեր անոնք, խանութներու և վաճառատանց վերեւ փակցուած նշաններ ալ չէին, ո՛չ ալ ելեքտրաշող ծանուցումներ, որոնք այժմ կը փայլին գիշեր ատեն գոյնզգոյն լոյսերով։ Այն ատենները տաանկ բաներու մասին երբեք լսուած չէր տակուին։ Այսուամենայնիւ անոնք տարօրինակ նշանատախտակներ էին, որովհետեւ անոնց վրայ գրուած էր. —

«ԲՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ԱՍՏՈՒԱԾԸ ՊԷՏԲ ՉԷ ՈՐ ԶԱԲՈՆ ԳԱՅ, ԵԹԷ ՀԱՄԱՐՁԱԿԻ ԳԱԼ ՊԱՏԻԺԸ ՊԻՏԻ ԿՐԷ ԳԼՈՒԽԸ ՎՐԱՅ ՏԱԼՈՎ»։

Այն ատեն ձօ Նիշիմա անուանով տղայ մը կարս Ան կարդաց սոյն նշանատախտակներու վրայ գրուածը, Եվ զարմանաւ, խորհեցաւ ան ինքնիրեն, թէ ինչո՞ւ այդ Աստուածը Ճաբոն պէտք չէ մտնէ։ Ես կ'ուզեմ ճանչնալ զԱյն»։

Ձօ Նիշիմա սկսաւ ուրիշ երկիրներու մասին հետաքրքրուիլ, իր ձեռքը անցած գիրքերը կը կարդար։ Սակայն Չինաստանի, Հնդկաստանի և Գորեայի մասին գրուած գիրքերուն մէջ չկրցաւ գտնել իր փնտռած Աստուածը։

Օր մը Միացեալ Նահանգաց Խորհրդադրութիւն մը գտաւ և կարդաց

ծայրէ ծայր։ «Արգելուած Աստուծոյ երկիրը այս բլլալու է, ըսաւ մօրը, ես հոն պիտի երթամ զԱյն գտնելու»։

«Եթէ հոն երթաս, ըսաւ մայրը, այլեւս հայրենիք չես կրնար վերադառնալ։ Մեր կայսրը օրէնք մը հրատարակած է, որով եթէ մէկը իր հայրենիքը ձգէ՝ յանցաւարտ կ'ըլլայ և երբ վերադառնայ կ'սպաննուի»։

«Աւելի գէշը կայ, ըսին իր զարմիկները, այդ պարագային մարդիկ պիտի խորհին՝ թէ մերինը քրիստոնեայ ընտանիք մըն է, հետեւաբար առ մէնքս պիտի սպաննուինք»։

«Այդ մասին մի՛ մտահոգուիք, պատասխանեց Նիշիմա քաջաբար, ես ունիմ իմ ծրագիրս»։

Մութ գիշեր մըն էր՝ երբ Նիշիմա ձգեց իր տունը։ Գիշեր ցորեկ քալեց մինչեւ որ հասաւ Նաւահանգիստ մը, ուր նաւ մը կար ածուխ առնելու եկած Չինաստան երթալու։ Այդ նաւուն մէջ կ'ընդունուէ իբր գործաւոր և երբ Չինաստան կը հասնի կը գտնէ հոն նաւ մը Ամերիկա մեկնող։ Նաւապետը կուտայ իրեն գործ մը և կը տանի զինքը մինչեւ Պօսթոն։ Այն տեղ քրիստոնեայ ընտանիք մը զինքը կ'ընդունի և կը ղրկէ զպրոց։ Հայրենաբողձ Նիշիման շատ անգամ կարօտը կը քաշէր իր տան և ընտանիքին, սակայն ուրախ էր, որովհետեւ հասած էր իր փափաքին։ Ամերիկա կը գտնուէր և մանաւանդ գտած էր զԱստուծոյ։

Անցան տարիներ և փոխուեցան ժամանակները՝ Նոր կայսր մը բարձրացաւ գահ՝ որ լուսամիտ վեհապետ մըն էր։ Ան մարդիկ ղրկեց Ամերիկա, որպէսզի տնոր մեծութեան գաղտնիքը սորվին։ Անոնք տեղւոյն լեզուն չէին հասկնար ձօ Նիշիման երբ իմացաւ անոնց ժամանումը գնաց անոնց հետ խօսելու։ Նիշիմա կ'ըսէր, «Եղբայրներ եթէ կ'ուզէք որ ձաբոն Ամերիկայի պէս ըլլայ, գտցէք ու ըսէք կայսեր՝ որ այդ նշանատախտակները կործանէ, և թող տայ որ քրիստոնեային Աստուածը ձաբոն ներս մտնէ։ Անիկա մենակարող Աստուած է»։

Այդպէս էր որ այդ նշանատախտակները կոտորուեցան։ Ձօ Նիշիմա վերադարձաւ իր հայրենիքը՝ Իրենց տան կուռքերը նետեց գետը, և ասոր մէջ մայրը օգնեց իրեն։ Անկէ ետքը Նիշիմա հիմնեց առաջին քոյէճը՝ ձաբոնի մէջ։ Այն ատեն միսիօնարներու բացած դպրոցները աննշան բաներ էին միայն։

Այժմ բազմաթիւ առօրեայ, հանրային դպրոց և Կ. դպրոցներ կան ձաբոնի մէջ։ Կայսեր հրամանով Կ. դպրոց յաճախող աշակերտներ աւելի քան 200,000 կը հաշուուին։ Ասոնց մէջ անցեալ տարի 7000 հոգիներ կային որոնք մէկ կիրակի իսկ չէին բացակայած դպրոցէն։

Աստուած էր՝ որ ձօ Նիշիման ղրկեց Ամերիկա. իր ժողովուրդը այնքան պէտք ունէր իրեն։

ԹՈՉԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓԵՏՈՒՐՆԵՐ

Անգամ մը քարոզիչին մէկը Աւետարանչական գործին վրայ քարոզ մը կուտար, չնշելով տուու շնորհքը որպէսզի կարելի ըլլայ Տէրոջը գործին տարածումը։ Սոյն նպատակի համար երբ եկեղեցիին սարկուսազը գտնաւանակը կը պտտցնէր, ժողովուրդը

«ՀԱՉԻՒ ՏՂԱՅ ՄԸ»

«Հազիւ տղայ մը», ըսիր ինձի՞,
«Հազիւ տղայ մը», անշուշտ պարոն,
Եթէ ապրիմ, նման քեզի
Պիտ' ըլլամ մարդ քարի խոհուն։

«Միայն տղայ մը», կը խորհիս դուն,
Ես սկիզբն եմ, գալիք մարդուն
Եւ մասն եմ, այս մեծ աշխարհի
Թէպէտ փոքր, բայց ոչ անհարկի։
Կրնամ գործել, այլոց համար
Թէպէտ կըզգամ թէ չեմ յամար.
Արդ, օգնէ՛ ինձ դուն ո՛վ Յիսուս
Որ մեծնամ ու ըլլամ մի լոյս։

ՏՂԱՒ ՄԸ ԱՂՕՐԲԸ

Ով իմ Յիսուս, միայն իմ յոյս,
Լեւ ըսփոփանք մաքաղ հոգւոյս.
Թեւ երկար, մանուկ անգօր,
Այլ միտ կ'օրհնեմ անունդ հրգօր։

Տուր ինձ քննորհ, չըլլամ անհոգ,
Քեզի յանձնեմ իմ ամեն հոգ.
Մհ, կ'աղաչեմ, լեւ ինձ պաշտպան,
Զուցիմ ուրիշ Տէր-Տիրական։

Քեզ կ'աղերսեմ, Փրկիչ Յիսուս,
Որ ես իմ կեանքս, Արեւս ու Լոյս,
Որպէս անձրեւ կուտայ բոյսին,
Նոյնպէս տուր ինձ քննորհդ անգին։

Ինչո՞ւ բղձամ սին աշխարհին
Ունայն փառաց որ վաղ կ'անցնին.
Քեզի, Յիսուս, սիրով յարիմ,
Կենաց ջուրիդ, ա՛հ, փափաքիմ։
Ք.

Կ'երգէր «Թուր Աւետարան, Թուր»
երգը։ Տիկին Սառա մը այնքան խանդավառուած և յափշտակուած կ'երգէր՝ որ իրեն երկնցուած գտնաւանակը չէր տեսներ։ Սարկուսազը չուզելով սպասել երկուր ըսաւ «Սառա՛, թռչելու համար քանի մը փետուրներ չե՞ս տար»։

ՀԱՐՅՈՒՄ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Հ.— Ինչո՞ւ Յիսուս թզենին նզովեց
և չորցուց անպտուղ ըլլալուն համար,
քանի որ ըստած է թէ՝ «Դեռ թուզի
աստին չէր»:

Պ.— Դէպքին ուշադիր ընթերցումը
կը լուծէ դժուարութիւնը: Տէրը հե-
ռուէն տեսաւ ծառը, և ուկնկալեց
գտնել բան մը: Ստորագծեցինք վեր-
ջին բառը, անոր համար որ մեր Տէրը
կը փնտռէր ոչ թէ հասուն պտուղ, որ
ժամանակը չէր՝ այլ խակ պտուղ: Կա-
նաչ թուղ առհասարակ կ'ընկերանայ
տերեւին, և այդ էր որ Տէրը չգտաւ:
Ծառը բոլորովին անպտուղ էր:

Այստեղմենայնիւ ո՞վ կրնայ հաս-
կընալ Յիսուսի ներքին շարժառիթը
որպէսզի կարենայ ըսել՝ թէ ինչո՞ւ
չորցուց զայն: Պէտք է պատկառան-
քով ընդունիլ եղածը, և իրողութիւ-
նը թէ Ան բան մը ըրած ժամանակ
արդար պատճառ մը ունի միշտ:



Հ.— Մատթէոս, Մարկոս և Յով-
հաննէս աւետարանիչներ դէպքի մը
յիշատակութիւնը կ'ընեն, ուր կին մը
Յիսուսի գլուխը կ'օծէ թանկարժէք
անուշահոտ իւղով: Ըստ Յովհաննէս
աւետարանիչին այդ կինը Բեթանիոցի
Մարիամն է, Ղազարոսի քոյրը: Սա-
կայն նման դէպք մըն ալ կը յիշուի
(Ղուկ. 7:36-40) ին մէջ, այս պարա-
գային կինը «մեղաւոր» կ'որակուի և
Յիսուսին ոտքերն են որ կ'օծուին:
Հաճեցէ՛ք ըսել թէ արդեօք Ղուկասին
մէջ յիշուածն ալ միեւնոյն դէպքին
կ'ակնարկէ:

Պ.— Ոչ: Ղուկասին մէջ յիշուածը
բոլորովին տարբեր դէպքի մը յիշա-
տակութիւնն է: Արդարեւ հոս յիշուած

կինը «մեղաւոր» կոչուած է, և դէպ-
քը կատարուած է մեր Տիրոջ խաչե-
լութենէն ամիսներ առաջ Կափառնա-
յուսի մէջ, իսկ միւս Աւետարանե-
րուն մէջ յիշուածը միեւնոյն դէպքին
յիշատակութիւնն է՝ որ տեղի ունեցաւ
Բեթանիո, Քրիստոսի խաչելութենէն
քանի մը օր առաջ միայն: Երկուքը
իրարու հետ չփոթել, ուրիշներու
մտքին մէջ Մարիամին նկարագրին
հանդէպ կասկած տուած է: Այդ տե-
սակէտէն պէտք է որ շիտակ հասկցուի
այս պարագան: Ընթերցողը կրնայ ան-
ձամբ ուսումնասիրել զայն: Կը յանձ-
նարարուի կարդալ (Մատթ. 28:6-13.
Մարկ. 14:3-9. և Յովհ. 12:3) համար-
ները:



ՔԱՂՅՐ ԽՕՄԲԵՐ ՏԱՆ ՄԷՋ

Աւաւտուուն քու խօսքերդ ըլլան
քաղցր, անիկա կը թեթեւցնէ օրուան
հոգերը և կ'օգնէ առանին գործերուն
դիւրընթացութեան: Երեկոյին քու
խօսքերդ ըլլան քաղցր, որովհետեւ
կրնայ ըլլալ՝ որ առաւօտէն առաջ սի-
րելիներէդ մէկը՝ աւարտէ իր օրերը
այս աշխարհի մէջ, հետեւաբար ուշ
ըլլայ ներողութիւն ինդրել:

Յարաժամ խօսքերդ ըլլան քաղ-
ցր, անիկա կը քաջալերէ յուսահա-
տը, կը մխիթարէ վշտակիրը, և մո-
լորածը կը մղէ լուսագոյնին համար
որոշելու: Քաղցր խօսքեր բալտասն են
հոգւոյն: Ինչպէս իւղը մեքենային,
այնպէս են անուշ խօսքեր կեանքի
պայմաններուն համար, կ'օգնէ անոնց
դիւրասան ընթացքին:

ԿԻՆԱՆՆԻ ԻՒՃՐԵԹԻ

ԻՕՄ. 6 23

Նէ՞ տիր կիւնահ: Կիւնահ պիր մատտէ եախտ պիր նէսնէ օլմայըպ իլլա պիր ֆիրի տիր, խոսոսուսա Ալլահն. էմրլէրինէ գարըը իշլէնիլէն ֆիրի տիր, պիր սէօզ իլէ Ալլահա գարըը օլան իթաաթսըզլըզ վէ իսնան տըր: Յովհաննէս Բէսուլ կիւնահն «չէրիաթը թէճալուզ էթմէք տիր» տէյու թէլլագըը էտիյօր: Կիւնահ Ագամ վասըթասըլլէ պու տիւնեայա կիրմիշ օլարագ ճիւմլէ ախլագի մախլուգաթըն գալպինտէ պիր ամիր հալինտէ հիւքմ սիւրմէքտէ տիր վէ պուռուռլէ մէխուֆ նէթիճէլէր մէյտանա կէլիյօր:

1. Կիւնահ ամիր տիր: Յովհաննէս Բէսուլ «չէր քիմ կիւնահ իշլէրսէ կիւնահն գուլու տըր» տէյօր. իմտի կիւնահ, քէնտինէ գուլլուզ էտէլէրին ամիրի տիր: Օ անլէր իւզէրինտէ քեամիլ սալթանաթ էյլէր: Պիր ինսան իւզէրինտէ կիւնահն թէսալլու-թուռտան տահա գուլվէթլի վէ տէհչէթլի պիր թէսալլութ ասլա օլամագ: Վէ հագիգաթէն անա թէպոիյէթ էտէնլէր նէ գատար չօգ տըրլար, միլիօնլարճա քիմսէլէր տիւնեանըն հէր թարաֆընտա պու գալիմ կիւնահն փէնչէսի ալթընտա ինլէմէքտէ տիրլէր: Նէ գատար քիմսէլէր կիւնահն զէնճիրլէրի ալթընտա էսիր միսիլլու ազապ չէքմէքտէ տիրլէր:

2. Խնսանլարըն էքսէրիյէթի պու ամիրէ ճան ու կէօնիւլտէն գուլլուզ էթմէքտէ տիրլէր: Ատէմլէր կիւնահա օ գատար ազիմ պիր մուհապպէթլէ սարըլմըը տըրլար քի, նէ Ալլահն շէրիաթը, նէ անլէրին վիճտանլարընըն սէսի վէ նէ տախի անլէրին ճանլարընըն էպէտի հէլաքը քէնտիլէրի ուլլանտըրմայօրլար պու խասիմ ամի-

րին էսարէթինտէն ազատ էթմէք իչիւն: Անլէր պու ամիրէ ճան ու կէօնիւլտէն իթաաթ էտիպ սատըզ թէպատարը օլմուշ տըրլար:

Էֆէնտիմիզ Յիսուս Բրիստոս քէնտիսի սէօյլէմէտիմի, «... ամէլլէրի շէրի օլտուզու սէպէպտէն, զուլմէթի նուրտան տահա զիյատէ սէվտիլէր»: Ատէմլէր կիւնահն օ գատար սէվիյօրլար քի զանն էտէրսին քի անըն իլէ եէքվիճուտ օլմուշ տըրլար: Մէսէլա, ալ պիր միւսքիրէ միւսպթէլա օլան պիր պիշարէյի, միւսքիրէ օլ գատար իշթիրագ վէ տըրլու իլէ եալլաշըր քի, նէ հիւսպ, նէ շէրէֆ, նէ վիճտան, նէ Ֆամիլեա վէ չօճուզլարըն մուհապպէթի քէնտինի անտէն այըրմալլար, չիւնքի պու միւսքիր իւնհընա վագֆ օլունմուշ օլարագ սալթ անըն իշիւնեալարըպ անա խըտմէթ էտիյօր: Ալ շէհվէթէ միւսպթէլա օլան պիր քիմսէյի, քի պիւթիւն գալպլէ մէսէրրէթ վէ ազիմ պիր իշթիրագ իլէ շէհվէթինլարգուլարընա խըտմէթ էտէր: Պաազըլարըն տախի իլահն «պէն» իլահն տըր: Պու կիպի քիմսէլէր քէնտի նէֆսէրի իլէ օլ գատար գալիլմըը տըրլար քի պաշգա հիշ պիր քիմսէյի թանըմալլար, հէր քիմսէտէն եիւքսէք տիրլէր, հէր շէյի ալթըլըրլար, հէր շէյի պիլիլլէր, շէօյլէքի պու «պէն» իլահնը պիր փութ մազամընտա գալպլէրինէ գօյմուշ տըրլար վէ ազիմ պիր կէրմիյէթ իլէ անա տըր ուպուտիյէթ էտիյօրլար: Կիւնահ, քէնտինէ գուլլուզ էտէնլէրի տալա իւնրէթսիզ պըրագմագ:

3. Կիւնահն իւնրէթի նէ՞ տիր: Ճէվապը նէ գատար տա զըսսա իսէլաքին անըն մանասը չօգ միւլէսսիր տիր «Կիւնահն վէրտիյի իւնրէթ էօլիւմ տիր»: Պիրինճի եէրտէ ճէսէտի էօլիւմ տիր ետնի կիւնահ էվվէլա պու էօմրտէ էօլիւմ վէրի իւնրէթ

Հալընտաւ ներոն քէնտի մուալլիմի օլուպ, քէնտի թէրագգըսը իչիւն խըտմէթ էթմիշ օլան Սենեկայը իւճրէթ սիզ պրագմաւոր: Անըն վէրտիյի իւճրէթ էօլիւմ իտի ներոն Սենեկայոյ էօլիւմ խապէրիւն իրսալ էյլէտիյինտէ, Սենեկոյ, «Անտէն պուլնտան պաշգաւ պիր շէյ մէմուլ էթմէզ իտիմ», տէյու ճէվապ վէրտի, Լաքին կիւնահըն էն քիւչիւյի պիլէ ներոնտան չօգգալիւմ վէ զատաւոր տըր:

Կիւնահ տէյիլ սալթ թէնճէ էօլիւմ վէրիւր իլլա ագլմա վէ բուճմա տախի էօլիւմ վէրիւր Կիւնահ օլ գաւտաւ միւնչիք վէ տանի վազթաւ թէնչիքէի տիր քի, կէմիտէ օլան ուֆագ պիր տէլիյին անըն զարգ օլուճմասընա սէպէպօլտուղու կիպի կիւնահ տախի ճանըն յաւ տիւնեա ովկիսնոսընտա զալպ օլմասընա սէպէպ օլուր Կիւնահ պիր պուլաշգ խասթալըղա պէնզէր քի պիւթիւն մէմլէքէթլէրի մանվէտէր: Օճէսէտի չիւրիւտիւր, իֆսատ էտէր, քէօթիւ թապիտթլարա միւպթէլա էտէր Սալիգինէ գարշը իսեան գալտըթաըրըր, աղրըլարա, կիւճիւքլէրէ, խասթալըղլարա, տէրալէրէ վէ քէտէրլէրէ միւպթէլա էտէր: Մէրագ զընտանընա եուվարլար: Ֆիքրինի իֆսատ էտէր, հիսսիյաթլարընը խաւալ էտէր: Քէնտինի տաիմա ուլանտըրմաղա վէ Սալիգինէ սողրու պագմասընա գըլաղուղլայան վիճտանընը ուլաղուղուր: Հիքմէթտէն վէ ֆէհմտէն մահրում էտէր, պիր սէօզ իլէ ինտանիյէթտէն քեամիլէն խարիճէ տթար:

Ի քիւնճի եէրաէ կիւնահըն էն տէնչէթլի վէրտիյի իւճրէթ Կպիէի էօլիւմ թիւր պու էօլիւմիւ Քիթապը Մուգաւտէս իքիւնճի էօլիւմ թէսմիյէ էտիյօր: Իքիւնճի էօլիւմ պիրինճի էօլիւմտէն տաւա տէնչէթլի տիր չիւնքի, պիրինճի էօլիւմ ճանըն ճէսէտտէն ալըլմա-

սը տըր: Ճէսէտ ճանըն պիր էլպիսէսի տիր, օ չիւրիւտիւյիւնտէ ճան անտէն ալըլըր, լաքին իքիւնճի էօլիւմ, ճանըն Սալիգինտէն ալըլմասը տըր, անըն ճէլալիւնին իւմիւտիւնտէն ալըլմասը տըր, էպէտի էօլիւմ տիր, էպէտի ճէգա տըր, էպէտի ճէնչէնչէմէ վէ անըն սօնաուղ ագապընա թէսլիւմ օլմագ տըր: Հագիգալթէն պու նէ հէյպէթլի վէ տէնչէթլի պիր հալ տըր, պուլու հանկը շաիրին գալէմի ետաւտ հանկը խաթիպին լիսանը թարիֆ էտէպիլիր:

Էյ սէվկիւլիւ վէ գըլմէթլի ճան էյէր Քրիստոսա իման էտիպ կիւնահալարընտան խէլաս պուլմուշ իսէն պիրինճի էօլիւմ սէնին իչիւն եէնի վէ էպէտի հալաթըն պաշլանկըճը տըր վէ իքիւնճի էօլիւմ սէնին իւզէրինէ տալա թէնչիւր իչլէտէմէյէճէք տիր չիւնքի Քրիստոս Քէնտի էօլիւմիւ իլէ սէնի անտէն գուրթարմըլ տըր: Էյէր տաւա անա իման էտիպ խէլաս պուլմամըլ իսէն վաճ ստնա, սէնին իչիւն պիրինճի էօլիւմ ետնի բուճուլուն ճէսէտիւնտէն ալըլմասը սէնին իչիւն իւմիւտ գափուլարընը սօն օլաւագ գափանմըլ օլմասը տըր ետնի արթըգ օլ ճէլիլ հալաթա տախիլ օլմագլըղըն իւմիւտսիւզ վէ շարէսիզ օլտուղուլու կէօսթէրիպ իքիւնճի էօլիւմիւն գափուլարը սէնին իչիւն կէնիշ աշըլմըլ օլուր:

Իմտի էյ կիւնահքեար տօսթում, պու կիւն կիւնահընըն վէրէճէյի հէյպէթլի վէ տէնչէթլի նէթիճէլէրինի կէօզլէրիյին էօնիւնէ ալըպ խէլասքեար Բապա Յիսուսըն մէճճանէն թագաիւմ էյլէտիյի խէլասը գապուլ էյլէ: «Ձիրա կիւնահըն վէրտիյի իւճրէթ էօլիւմ տիր, ամմա Ալլահըն մէվհիպէսի Բապալմըզ Յիսուս Քրիստոս վտաթաւըլէ էպէտի հալաթ տըր» Բօմ.6:23: Վեր. ԹէՈՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ

ԱԼԹՈՒՆ ՈՒՓԱՂԸ

2 ՀԻԼՄԻՅԷԹ

«Պէնտէն էօյրէնինիզ, չիւնքի հալիմ վէ գալպէն միւթէվազը իմ»:

Պու պէնիմ իչիւն սաստէ պիր հալաթ գանուռնը տըր, պէնտէն՝ իզթի-տարըմտան զիյաստէ պիր շէյ թալէպ էթմէյօր, պիլաքս հիսս էտիյօրում քի օ պէնի Ալլահա իլհապ էտիյօր: Պէնի տահա զիյաստէ կէրմի, վազիֆէմէ սաստըգ, էօլիւմէ հազըր Ետիբըյօր: Օնու պանա գանուռն էտէլի, օ պանա թէսէլի, նուր վէ գուվվէթ մէնպար օլմըշ տըր, Եինէ տէ Ալլահ պիլիբ քի էօմ-րիւմ նէ՝ գաստար էլէմ իլէ տօլու պիր էօմր օլմըշ տըր:

Սէվկիւլիւ տօսթլար, սիզ քի պէնիմ կիպի մուգաստէս օլմուգ հասրէթինտէսինիզ, էֆէնտիմիզին պու սէօ-զիւնիւ պիւթիւն սաստէլիյիլէ սիզէ թալսիյէ էտէրիմ: Տինլէյինիզ, օ Յի-սուսըն սէվէն գալպինտէն սիտուր էտիյօր օ Անըն լաթիֆ տուտազլարըն-տան տիւշիւյօր, «Պէնտէն էօյրէնինիզ, չիւնքի հալիմ վէ գալպէն միւթէվազը իմ»:

Ալլահա օղդու ճիլմիյիք.— Պու կիւն պէ կիւն Ալլահըն թահթը նասըթասըն վէ իլահի Մուգաստէս վասըթասընլէ թէրթիպ էտիմիշ մահալ վէ իշտէ Եաշամազ տըր: Պիր վալիտէ քէնտի չօճուղընը վազթընը կէչիրէ-ճէյի մահալը տիզգաթ իլէ թէրթիպ էյլէտիյի կիպի, Ալլահ պանա թազ-տիմ օլուռն հէր պիր վազթը թէր-թիպ էտէր: Նէ Ետիբըլմազ իսէ, օնու Ետիբըլմազըմ Բէնտիին իրասէթի տիր, վէ անըն հիւսնի սուրէթտէ իճ-րոսը իչիւն լազըմ օլան վազթը, հիքմէթի, իզթիտարը վէ մալիւմաթը պանա թէտուրիք էտէր:

Պանա կէլէն հէր հանկը պիր էլէմի թաշըմազըլըմը օ պէնտէն մէ-մուլ էտէր, օնու իչիւն վէլէվ պիթ սէպէպ կէօրէմէզ իսէմ պիլէ, վէ • էլէմ պանա ֆիդան ու ֆէրհաստ էտէճէք գաստար քէսկին օլուր իսէ օ լէթա-ֆէթ իլէ գուլաղըմա ֆըսըլտույըպ տէր, «Ճէսարէթլէն էվլասըմ, չիւնքի պու շէյ պէնիմ իրասէթիմ տիր»:

Իչիմի մէն էտէն պիր շէյ վազը օլուր իսէ, փլան վէ փրօզըմալարըմա հէր հանկը պիր շէյ զըստ կիտէր իսէ, օ գաստէն պէօլէ թէրթիպ էթմիշ տիր: Չիւնքի, օ պիլիբ քի աշըրը մուվաֆֆադիյէթ պանա զուրուրը մուճիպ օլուճազ, աշըրը բահաթլըգ պէնտէ հէվայի հալէս մէյտանա կէթի-րէճէք: Պանա էօյրէթմէք իսթէյօր քի սէմայա տօղրու Եօլ մուվաֆֆադիյէթ տէյիլ իլա էմէք վէ վազֆիյէթ տիր:

Պու նէվ էֆքեուր՝ տէրուտէ մէյ-տանա կէլէն իսեանը թէսքին էտէր: Նէ՝ տուտէ պիր գալպ իլէ, մէսէր-րէթ իլէ իչիմիզ պաշլանըլըր, տէվամ էտիլիբ, պասազէն իլալ էտիլիբ, թէք-րար պաշլանըլըր: Հէր սասաթ պիզէ հիւճմ էտէն տիւշմէնլէրիմիզէ—աթա-լէթ, տաճէլէնիլիք, մուվաֆֆադիյէթ, կիւճիւլքէրտէն տօլայը տէվամէթ-սիզլիք—նէ՝ գուվվէթ իլէ մուգալէ-մէթ էտէրիզ:

Ալլահազ կէչիրտիյիմ կէչմիշ պիր չօգ սէնլէյի ֆիքրիմտէ ույանըպ պէնի պիհուզո՞ւր մը էտիյօրլար: Օհ, պիլա շիւպէն անլէրին մուճիպ օլտուղը քէ-տէր վէ խէճալէթ քէսկին տիր, ֆա-գաթ նէ՝ սէպէպտէն օնար պէնի բա-հաթսըգ էթմէլիլէր: Ալլահ քէնտի սէվկիւլիւ Օղլուռնը խաթըր իչիւն, ճիտտէն թէվպէ էտիպ Բրիտտոս վէ Ինճիլէ իման էտէնլէրէ տֆվ վաստ էթմէմիշ մի իզրարըմ օլմը՝ մը, վազֆիյէթիմ թէմամ մը: Ալլահըն իսմիլէ միւսթազպէլ իչիւն նէ էթմէմ

պոռնուրը լմը իսկ օնու իճրա էթմէյէ
բազի օ՛լմամբը մը:

Միւս թագապէլ պէնի գորգուտո՛ւյօր
մը Ֆիքրիմտէ մէյտանա կէլէն տիւլա-
նէճէ խայտլար պանա կիւլիւնճ սէ-
պէպի շէյլէր տիր. տէյի՛լ մի քի միւս-
թագապէլիմ Ալլանըն էլինտէ տիր. Նէ՛-
աճաիպ շէյ, մատէմ քի եարըն, օլպիր
կիւն, պոռնտան օն, երիմի սէնէ սօն-
րա պանա թէսատիւֆ էտէճէք օլան
շէյլէրի Օ պէնիմ իչիւն թէրթիպ էթ-
միշ տիր, անլէր պէնիմ իչիւն խայրլը
տէյիլ իմիշ կիպի նիչիւն քէնտիմի
պիւռզուր էտէյիմ:

Եւ Ռապպ պէնիմ տէլիլիմ սէն
օլ, վէ սանա խօշ կէօրիւնտիւլինէ կէօ-
րէ պէնիմ նասիպիմի սէն թային էթ:

(Տեվամը վար)

ԵՐԷՑ

«Ահեմլեթէ հիւսնի բիգա».— Ալ-
լանըն ասէմլէրէ տօղրու օլան պու
հիւսնի բիգասընըն էն փարլագ իսպա-
թը չու տըր, «Ալլան տիւնետը պու
գատար սէվտի՛ քի Քէնտի Իպնի վա-
հիտինի վէրտի, թաքի անա հէր իման
էտէն հէլաք օլմայըպ, անճագ էպէտի
հայաթա մալիք օլա»:

Ալթը պին սէնէտէն պէրրի Ալլան
պու մուհապէթիլլէ ճինսի ինսանա
մէյտան օգույօր վէ շիմտիյէ գատար
օնու գապուլ էտէնլէրտէն հիշ պիրի
խէճիլ օլմամըն տըր:

Հ. Օ. Ֆ

Վա՛ր մը էօյլէ պիր գայդուն քի
օնու Քրիստոսա կէթիրմէյօրսուն:
Վա՛ր մը մուհիպի մէրուգ պիր մէսէ-
լէն քի օնու Քրիստոսա կէթիւրէճէք
գատար մուհիմ աստ էթմէյօրսըն:
էօյլէ իսէ օ սէնին տէ ֆիքրինէ մատ-
տէ օլաճագ գատար մուհիմ տէյիլ
տիր. Եւ հէր գայդունը սէնի գայը-
րանըն իւզէրինէ պրուգ, եւ հօգ իսէ
սէնտէն տէֆ էթ:

ԳՕՐԳՈՒՍԸՂ ՊԻՐ ՇԷՀԱՍԷԹ

Ալմանիանըն ազիմ պիր փատի-
շանլարընտան Ֆրէտէրիքին էն պէօ-
յիւք ճէնէրալարընտան Վօն Զէլանտ
հագիգի պիր խրիսթիան իտի իսէ տէ
փատիշան պիր միւսթէնգի իտի Պիր
կիւն փատիշան գապա շագալար իլէ
Քրիստոսը հիճվ էտիյօր վէ էթրաֆըն-
տաքիլէր գահգահալար գօփարըյօր-
լարտը Պու շէյ Վօն Զէլանտըն չօգ
կիւհիւնէ կիթտի. Քէնտիսի իտի քի
Փրուսիա իչիւն հիստպսըզ մուհաթէ-
պէլէր գազանմըն վէ հաթթա փատի-
շանըն պոշընա թաճը գօյտուրմընտը:

Ալմանլարա մախսուս ասքէրի
տուրուշ ալարագ վէ էթրաֆընտաքի
տալգաւղուգլարըն ումում սիւքիւնէթի
օրթասընտա ալաղա գալգըպ տէտի,
«Հաշմէթլի էֆէնտիմ, պիլիրսին քի
էօլիւմտէն գօրգամմընմ, սէնին իչիւն
38 հարպ իչինտէ պուլուլմմըն վէ ճիւմ-
լէսինտէ զալիպ կէլմիշիմ: Սաշլարմ
աղարմըն վէ տրթըգ իլսթիյար օլմու-
շըմ: Պիր ազ սօնրա սէնտէն տահա տ-
զիմ, հէր շէյէ գատիր Ռապպըն, վէ
պէնի կիւնաշլարմտան խէլաս էտէն
ֆագաթ սէնին քիւֆր էթտիլին Յի-
սուս Քրիստոսըն հուզուրընա չըգա-
ճաղմ: Հաշմէթլի փատիշանըմ, իլէ-
լասքետարմըն թահգիր էտիլտէի պիր
մահալտա տուրմաղա թէհամմիւլ է-
տէմէմ, էպէտիյէթին գըլըսընտա տուր-
տուղը հալտէ քէնտի խէլասքետարմըն
սէվէն ագ սաշլը պիր իլսթիյար աստէմ
կիպի սէնի սէլամլարմ»:

Պուռուս իւզէրինէ պու պէօյիւք
փատիշան թիթրէյէն պիր սէսլէ տէտի,
«Վօն Զէլանտ, պանա աֆվ էտինիզ,
աֆվ էտինիզ»:
Հազըրուս սէսսիզ տա-
ղըլմըն իտի, վէ փատիշան պուռուս
էվվէլ հիշ տիւլիւնմէտիյի ֆագաթ
քէնտինին ֆէվգինտէ օլան Զաթ հագ-
զընտա տիւլիւնմէյէ պաշլումըն տը,
պիր Զաթ քի Օնա ճէնէրալ Վօն Զէ-
լանտ քէնտի շախսընտան զիյատէ իհ-
թիրամ էտիյօր իտի:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԱԾԽԱՐՀԷ

Ամերիկեան թերթի մը համաձայն Կոստիա անուն ջերմեռանդ քրիստոնեայ մը աւետարանչութեան ինքնատիպ կերպ մը ունի։ Ան կը պահէ ծովափնեայ ճաշարան մը ուր կուգան մարդիկ միջնաճաշի համար։ Այս մարդը հաւաքել կուտայ նետուած ուխտքի շիշեր, կը մաքրէ վրայի թուղթերը, մէջերնին կը տեղաւորէ թերթիկներ, բերանները լաւ մը գոցելէ ե. կնքելէ ետքը կը յանձնէ զանոնք ծովուն։ Անոնցմէ շատեր ճամբորդներուն ձեռքը անցած են և ըստ իրենց վկայութեան այդ թերթիկներուն միջոցաւ Աւետարանի փրկարար ազդեցութիւնը կրած են։ Ատեն մը այս շիշերէն 2500 ջուր իջեցուցած է որոնք կը կրէին փրկագործ պատգամներ։

Իր ճաշարանը չըջապատուած է բարձրաբերձ շէնքերով ուրկէ կը նային հազարաւորներ իր տանիքին։ Այդ պատճառաւ խոշոր գիրերով տանիքին վրայ ներկել տուած է հետեւեալ համարը որպէսզի ամէնը կտրենան կարգալ, «Չըլլայ որ մոռնաք, Աստուած կրկին ու կրկին ձեզի կ'ըսէ «Մեղքին վարձքը մահ է, բայց Աստուծոյ ձրի պարգեւը յաւիտենական կեանք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի ձեռքով»։

* * Կ'ըսուի թէ Ճարոնի կառավարութիւնը իր բանակին մէջ գտնուող քրիստոնեայ զինուորներէն կը նեղուի։ Անոնք կը զինուորագրուին և կը մասնակցին զինուորական մարզանքին, որպէսզի իրենց ծնողաց վերայ անարգանք չբերեն, որովհետեւ արեւելքի մէջ ընտանեկան հաւատարմութեան զգացումը զօրաւոր է, սակայն պատերազմի ժամանակ կրակելու հրամանին վրայ հրացաննին վար կ'առնեն։

* * Նիկոլա Լէնին անգամ մը ըսեր է, «Որքան մաքուր է կրօնքը և որքան ջերմեռանդ անոր հետեւորդները, այնքան աւելի վտանգաւոր է ան պոլշեւիկութեան համար»։ Կը թուի թէ Խորհրդային Ռուսիոյ մէջ տառացի կերպով կ'առնեն սոյն խօսքերը, որովհետեւ Աւետարանական եկեղեցիներ առաւելագոյն չափով տուժողներ են Սովիէթ լէժիմին ներքեւ կատարուած հալածանքէն։ Հալածանքը իր գազաթնակէտին հասցնելու համար բողոքական երկու մեծ եկեղեցիները գոցած են, այս կը նշանակէ թէ Ռուսիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ — Մոսկով, Լէնինկրատ, Քիէվ, Օտեսա — բողոքական եկեղեցի չէ մնացած։ Տակաւին կան բազմահազար հաւատարիմներ, սակայն իրենց հովիւները կամ բանտարկուած են, կամ սպաննուած։

* * Կ'ըսուի թէ Մուսօլինի համաշխարհային պատերազմէն առաջ գըրած է Պոնեմիոյ մեծ բարեկարգիչ Ճօն Հուսին կենսագրականը։ Սոյն գիրքին մէջ պարբերութիւն մը ունի եղեր սուպէս, «Երբ կը պատրաստեմ այս փոքրիկ հատորը հրատարակութեան նպատակաւ, իմ մէջս կը սնուցանեմ յոյս մը՝ թէ տարիկա ընթերցողներուն սրտին մէջ արթնցնէ տաղլութիւն մը, թէ՛ հոգեւոր և թէ աշխարհիկ բռնապետութեան դէմ»։ Այս լուրը տուող Ամերիկեան թերթը կը հարցնէ թէ արդեօք հեղինակը անկէ ի վեր այս խօսքերը ինքը կարդացած է։

* * Խափշիկ քարոզիչ մը, Թէքսաս, անցեալ 12 ամիսներու մէջ, միջոցը եղած է 610 հոգիներ Յիսուսի առաջնորդելու։

ԻՆՉՈՒՒ ԿԱՅՆԵՐ ԴԷՊԻ ԵՐԿԻՆՔ ԿԸ ՆԱՅԻՔ ԳՈՐԾՔ 1:11

Պատճառներ կան, թէ ինչո՞ւ համար բոլոր ճշմարիտ քրիստոնեաները միշտ գէպի վեր, երկինք կը նային:

1. Որովհետեւ Մեր Հայրը երկինքն է Մատթ. 6:9
2. » » Բաճանայտպետը երկինքն է Եբր. 4:14
3. » » Ժառանգութիւնը երկինքն է Ա. Պտ. 1:5
4. » » Յաւիտենական տունը երկինքն է 2. Կոր. 5:1
5. » » Գոհձը երկինքն է Մատթ. 6:20
6. » » Կեանքը երկինքն է Կող. 3:3
7. » » Բաղաքականութիւնը երկինքն է Փիլ. 3:20
8. » » Անունները երկինքի կենաց գիրքին մէջ գրուած են Ղուկ. 10:20
9. » » Սիրելիները որոնք Տէրոջմով ննջած են երկինքն են Ա. Թէս. 4:16-17
10. » » Փրկիչը երկինքէն պիտի գայ մեծ փառքով ու զօրութիւնով Իր Հարսը Հոն տանելու համար Փիլ. 3:20
11. » » Յաւիտեան Տէրոջը հետ պիտի ըլլանք, ինչ միտիթարութիւն Ա. Թէս. 4:16

Դաւիթ կ'ըսէ «Երկինքի մէջ ո՞վ ունիմ (վերոյիշեալ բաները) երկրի վրայ ալ Բեզմէ ուրիշը չեմ ուզեր»

Վերի բաները փնտեցե՛ք, վերի բաները մտածեցե՛ք

Կ. Յ. Թ.

Եթէ Տերը կամի, Ջաշկի տօնին առթիւ, մեր յաջորդ թիւը պիտի պարունակէ մասնաւոր յօդուածներ եւ հետաքրքրական պատմութիւններ:

Կարդացե՛ք «Աւետարանի Ձայն»ը եւ տարածեցե՛ք զայն:

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եղբ. Յ. Մովսէսեան Գահիրէյէն, մէյ մէկ տարուան «Աւետարանի Զայն» կը նուիրէ հետեւեալ նստցենքերու.—

1. Պր. Ե. Ալպարեան, Պուէնոս Այրէս

2. » Մ. Անլիսն, Գահիրէյ

Եղբայր մը Գահիրէյէն չորս տարբեր անձերու կը նուիրէ մէյմէկ տարուան «Աւետարանի Զայն»

Տիկ. Բ. Լեւոնեան Աղեքսանդրիայէն, մէկ տարուան «Աւետարանի Զայն» կը նուիրէ Վեր. Տ. Խրլորեանին, Գըրըգ Խան:

Մի ոմն Գահիրէյէն, 50 Եգ. Դհ. կը նուիրէ «Աւետարանի Զայն»-ի ֆօնտին:

Սմբադրութիւնս իր շնորհակալութիւնները կը յայտնէ յարգելի նուիրատուներուն:

ՅԵՐԹԻՍ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

Եգիպտոս՝ 25 Ե. դ.

Ամերիկա՝ 1 1/2 տոլար

Ֆրանսա եւ Սիւրիա՝ 30 Ֆրանկ

Նկատի ունենալով մեր հայրենակիցներէն ոմանց նիւթական անձուկ վիճակը, յօժար ենք այդպիսիներուն գեղչեալ գնով մը ղրկել թերթը, եթէ առ այդ մեզի իմացնեն անձամբ կամ մեր գործակալին միջոցաւ:

ՄԵՐ ՔՈՎԸ ԿԸ ԳՏՆՈՒՆ ՇԵՏԵՒԵԱԼ ԳՐՔՈՅԿՆԵՐԸ

1. Չարլի Գըլզըն	24 Եգ	Գին՝	1 Ե. դ.
2. Սամուէլ Մօրիս	32 "	"	1 Ե. դ.
3. Գործք Պիլասոսի	24 "	"	1 Ե. դ.
4. Իզնասիոս	20 "	"	կես Ե. դ.

Վերոյիշեալ գրքոյկները հանելի, խիստ հետաքրքրաւոր եւ հոգեւունչ պատմութիւններ են: Դիմել խմբագրութեան հասցեյին:

PRINTED IN EGYPT BY
SAHAG MESROB PRESS,

35, SHARIA JEWFIK, CAIRO.